

340

3K13

4-68

1930

100

38

14 NOV 2000

ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.



ԿԱՐԼ ՄԱՐԺՍԻ ՅԵՎ ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍԻ

ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԽՍՀՄ ԳՐՈՒԹՅԱՄԲ Ս. ԿԱՍՅԱՆԻ

ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ

ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲՆԱԳՐԻՑ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

3K13

4-68

ՍՁ 435
3K13
4-68

13 MAY 2005

Պոլիտարհիմն բոլոր յեղեմների, միացե՛ք.

ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ


ԿՈՄՄՈՒՆԻՉԻՉՄԻ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲՆԱԳՐԻՑ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1930



Թ ի Ճ ի ս
Պոլիգրաֆիկական 6-րդ սպարան
Գրառեսկի № 1766
Տպարան 8000, Պատկեր № 382.



59544.66

ԽՄԲԱԳՐԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Զարմանալի համեմատության տեր մարդ է յեղել Ենգելսը: Դրա բազմաթիվ ապացույցներից մեկն էլ այն է, ինչ պատմում է նրա նախկին աշակերտը, իսկ նրա մահից հետո, ուսուցչի ուսմունքը հիմնական բեմի գլխավոր յենթաբնույթի անհրաժեշտության առաջին դրոշակակիրը՝ Եղուարդ Բեռնեյսը:

Կոմունիստական Մանիֆեստի մասին խոսելիս, —ասում է Բերնեյսը, —նա պատմել է, Վոր «Մանիֆեստի» սկզբնական նախագիծը կազմել են թե Մարքսը և թե Բեռնեյսը առանձին-առանձին. և հենց այդ ժամանակ էլ «Նվիրել» է նրան Մարքսի կազմածից մի թերթ, սակայն մի խոսք անգամ չի ասել, թե իր կազմածն էլ է նրան: Շատ տարիներ հետո միայն, իմպերիալիստական պատերազմի համարյա նախորդից, գտնվում է նրա գրական ժառանգության մեջ իր սեփական ձեռքով գրած տետրը, վոր կազմում է սույն գրքույկը և վորը առաջին անգամ հրատարակել է նույն Բերնեյսը 1913 թվականի վերջերին:

Վոր հիշվի այս գրքույկը հենց այն նախագիծն է, վորն ինքը Ենգելսը համեմատությանը լուծյան է տվել, յերևում է մի նամակից, վորը Ենգելսը Փարիզից գրել է Մարքսին 1847 թվականի նոյեմբերին: Այդ նամակի վերջում կարդում ենք.

Մտածիր մի քիչ հավատո հանգանակի մասին: Յես կարծում եմ, շատ լավ արած կլինեյինք, յեթե հրաժարվեյինք կատիխիզիսային ձևից և գրվածքն անվանեյինք կոմունիստական մանիֆեստ: Յենթադրած ձևը բոլորովին հարմար չե, վորովհետեւ շատ թե քիչ պատմական ակնարկ ևս պետք է արվի այնտեղ: Յես հետո կրեքեմ այստեղինը, վոր գրել եմ ինքս: Այդտեղ պարզապես պատմում եմ, սակայն խմբագրված է շատ վատ և մեծ աճապարանքով: Յես սկսում եմ այն հարցից, թե ինչ է կոմունիզմը, և ապա իսկույն՝ ինչ է պրոլետարիատը — այդ դասակարգի ծագման պատմությունը, նրա տարրերությունը առաջին աշխատավորներից, պրոլետարիատի և բուրժուազիայի հակադրության զարգացումը, ճգնաժամերը, հետևություններ...

Տարակույս չկա ուրեմն, վոր Ենգելսի այս աշխատությունը «Կոմունիստական Մանիֆեստի» սկզբնական նախագիծն է, վորը Մարքսի նախագիծն է հետ ձուլվելով՝ ծնունդ է տվել անմահ «Մանիֆեստին»:

Ավելորդ կլինեի այստեղ հանգամանորեն համեմատել այս աշխատությունը «Մանիֆեստի» հետ, մանրամասն զուգահեռական տանել զբանջ միջև: Հարցերի զրույթի և սկզբունքային լուծման մեջ տարբերություններ, իհարկե, չկան: Այդ յերկու գրվածքների միջև յեղած տարբերությունը միայն արտաքինն է: «Կոմունիզմի սկզբունքները» չունի «Կոմունիստական Մանիֆեստ»-ի դասականությունը, հմայքն ու ծանրությունը, ույժն ու քափը: «Մանիֆեստ»-ը մի հեղինակություն է, վորի նմանը մարդկություն գրական շուկան չի տեսել յերբեք՝ թե մտքի հարստության, թե հակիրճ ու սեղմ արտահայտության, թե ուժեղ ազդեցության և թե լեզվի սրության ու ներդաշնակության տեսակետից: «Կոմունիզմի սկզբունքները» այդ դասական հեղինակության ամենահաբազա յրացումն է ու ժողովրդականացումը, և վորպես այդպիսին՝ իր արժեքով և սեփական է ու մնայուն:

Դրանով մենք արդեն միտում ենք կտրականապես այն կարծիքը, վոր իբր թե Ենգելսի սույն գրվածքն ունի միայն պատմական նշանակություն:

Սակայն մեզ՝ լենինիստներին համար սույն հեղինակությունն ունի մի այլ նշանակություն ևս: Այն գալիս է հաստատելու, կույրերին և խուլներին անգամ պարզելու, վոր Լենինի ուսմունքը պրոլետարիատի հեղափոխականության յեվ հեղափոխական գործառնության մասին խոսքումն չէ մաքսիզմից, այլ, բնդեականապես, Մաքս-Ենգելսի նույն խնդրի մասին ունեցած տեսության վերականգնումն է, խորացումը յեվ ժամանակակցացումը:

Այդ յերկու հանգամանքն է, վոր բացարձակ անհրաժեշտություն են դարձնում սույն գրքույկի հայերեն հրատարակությունը: Յեթե «Կոմունիստական Մանիֆեստը» դժվարամարս է սկսնակների համար, ապա «Կոմունիզմի սկզբունքները» համեմատաբար դյուրըմբռնելի յե: Լայն մասսայական ընթերցողի համար վերջինս պիտի դառնա այն, ինչ վոր է և պետք է լինի «Կոմունիստական Մանիֆեստը» առաջինը ընթերցողի համար: Այդ տեսակետից ել մոտենալով, մենք ձգտել ենք սույն թարգմանության մեջ գործադրել պարզ ու հասկանալի վոճ: Անհրաժեշտ դեպքերում քառակուսի փակագծերի մեջ գործ ենք ածել բացատրական կամ պարզաբանող բառեր:

Թարգմանություն արված է Ե. Բերնշտայնի գերմաներեն հրատարակությունից: Նա իր հրատարակությանը կցիլ է միշտ ք ծանոթություններ, ինչպես և այն հարցերի պատասխանները, վորոնք չեն գտնվել Ենգելսի ձեռագրում: Այդ պատասխաններից ու ծանոթություններից ենգելսի ձեռագրում: Այդ պատասխանները, վորոնք մեզ թվացել են անմենք վերցրել ենք միայն այնպիսիները, վորոնք մեզ թվացել են անհրաժեշտ ու հարմար, տեքստից պատասխանները տանելով ծանոթության բաժինը:

Ս. Կասյան

ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1-ԻՆ ՀԱՐՑ.— Ի՞նչ է կոմունիզմը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Կոմունիզմը պրոլետարիատի ազատագրության պայմանների ուսմունքն է:

2-ՐԴ ՀԱՐՑ.— Ի՞նչ է պրոլետարիատը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Պրոլետարիատը հասարակության այն դասակարգն է, վորը յուր գոյության միջոցներն ստանում է միայն և միմիայն իր աշխատանքը վաճառելուց, այլ վոչ թե վորևեկապիտալից ստացված ոգուտից: Այդ դասակարգի խնդրությունն ու վիշտը, կյանքն ու մահը, նրա վողջ գոյությունը կախված է աշխատանքի նկատմամբ յեղած պահանջից, հետևապես գործերի լավ կամ վատ գրությունից, անսանձ մրցման տատանումներից: Մի խոսքով պրոլետարիատը կամ պրոլետարների դասակարգը XIX-րդ դարու բանվոր դասակարգն է:

3-ՐԴ ՀԱՐՑ.— Ուրեմն մի՞տ չէ՞ն գոյություն ունեցել պրոլետարներ:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Վոչ: Աղքատ և աշխատող դասակարգեր միշտ գոյություն են ունեցել. սովորաբար աշխատող դասակարգերն ել յեղել են աղքատ: Սակայն այնպիսի աղքատներ, այնպիսի բանվորներ, վորոնք ապրած լինեյին մասնաշնչված պայմաններում, առաջ չկային, հետևաբար պրոլետարները միշտ գոյություն չեն ունեցել, ինչպես նաև գոյություն չի ունեցել ազատ և անսանձ մրցությունը:

4-ՐԴ ՀԱՐՑ.— Ի՞նչպե՞ս է առաջ յեկել պրոլետարիատը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Պրոլետարիատը առաջ է յեկել արդյունագործական հեղափոխության շնորհիվ, վորը տեղի յե ունեցել Անգ-

լիայում XVIII դարու յերկրորդ կիսում և վերը հետագայում կրկնվեց աշխարհի բոլոր քաղաքակիրթ յերկրներում: Այդ արդյունագործական հեղափոխությունն առաջ ե յեկել շոգեմեքենայի, դանագան մանելու մեքենաների, հյուսակային մեխանիքական կայանքի և մի շարք մեքենաների գյուտերի շնորհիւ: Այդ մեքենաները, վորոնք շատ թանգ էյին, ուստի և մատչելի միմիայն խոշոր կապիտալիստներին, փոխեցին արտադրության նախկին ձևը և դուրս քշեցին առաջվա բանվորներին, վորովհետև մեքենաներն սկսեցին արտադրել ավելի լավ և եժանապրանքներ, քան թե բանվորներն իրենց անկատար ճախարակներով և հյուսակումի կայանքներով: Այդ մեքենաները արդյունագործությունն ամբողջապես գցեցին խոշոր կապիտալիստների ձեռքը և բոլորովին անարժեք դարձրին բանվորների անշան սեփականությունը (գործիքները, հյուսակումի կայանքները և այլն): Այդպիսով ամեն ինչ անցավ կապիտալիստների ձեռքը, իսկ բանվորները մնացին ձեռնունայն: Դրա հետևանքով զգեստացու պատրաստելու համար մտցրին գործարանային սիստեմ: Յերբ մի անգամ արգեն դարկ ստացավ մեքենաների և գործարանային սիստեմի ներմուծումը, ապա վերջինս արագ գործադրություն գտավ նաև արդյունագործության մյուս բոլոր ճյուղերում, մանավանդ կտորեղեն պատրաստելու, տպագրության, կավագործության ու մետաղագործության մեջ: Աշխատանքն սկսեց ավելի ու ավելի բաժանվել առանձին բանվորների միջև, այնպես վոր այն բանվորը, վորն առաջ պատրաստում էր ամբողջական գործեր, այժմ պատրաստում է նրա մի մասը միայն: Աշխատանքի այդ բաժանումը հնարավոր դարձրեց արտադրանքների ավելի արագ ու եժանապրությունը: Նա առանձին բանվորի գործունեությունը վերածեց շատ հասարակ, յուրաքանչյուր ակնթարթում կրկնվող ձեռքի մեխանիքական շարժումի, վորը կարող էր մեքենայի միջոցով կատարվել վոչ միայն նույնքան լավ, այլ ավելի լավ: Այդպիսով արդյունագործության բոլոր ճյուղերը, մեկը մյուսի հետևից, ընկան շոգու, մեքենայի և գործարանային սիստեմի իշխանության տակ, ճիշտ այնպես, ինչպես մանվածային և հյուս-

սակային արդյունագործության մեջ: Միաժամանակ դրանք ամբողջապես անցան խոշոր կապիտալիստների ձեռքը, և բանվորներն այստեղ ևս զրկվեցին ինքնուրույնության վերջին մնացորդներից:

Հետզհետե գործարանային սիստեմին եր յենթարկվում, բացի մանուֆակտուրայից՝ բառիս բուն իմաստով, նաև արհեստը, վորովհետև խոշոր կապիտալիստներն այստեղ ևս դուրս էյին քշում մանր արհեստավորներին, հիմնելով խոշոր արհեստանոցներ, ուր կարելի յեր կրճատել ծախքերը և կիրառել աշխատանքի բաժանումը:

Այդպիսով քաղաքակիրթ յերկրներում աշխատանքի զրեթե բոլոր ճյուղերում մուծվեց արտադրության գործարանային սիստեմը, և աշխատանքի բոլոր ճյուղերից խոշոր արդյունագործությունը վտարեց արհեստն ու մանուֆակտուրան:

Շնորհիվ այդ հանգամանքի՝ նախկին միջին դասը, մասնավորապես մանր արհեստավորները, ավելի ու ավելի յեն քայքայվում, բանվորների նախկին դրությունը հիմնովին փոխվում ե և ստեղծվում ե մնացած դասակարգերին հետզհետե կլանող յերկու նոր դասակարգ, այսինքն՝

I. Խոշոր կապիտալիստների դասակարգը, վորը բոլոր քաղաքակիրթ յերկրներում ներկայումս արդեն բացառապես տեր ե գոյության բոլոր միջոցների և այդ միջոցների արտադրության համար անհրաժեշտ հում նյութերի ու գործիքների (մեքենաների, գործարանների):

Դա բուրժուա դասակարգն ե կամ բուրժուազիան:

II. Կատարելապես չունևորների դասակարգը, վորը հարկադրված ե վաճառել իր աշխատանքը բուրժուային՝ փոխարենը իր գոյության անհրաժեշտ միջոցներն ստանալու համար: Այդ դասակարգը կոչվում ե պրոլետարների դասակարգ կամ պրոլետարիատ:

5-րդ շԱՐՑ.— Խճ: պայմաններում ե անդի ունենում պրոլետարների աշխատանքի այդ վաճառումը բուրժուազիային:

ՊԱՍՏԱՆԱՆ.—Աշխատանքը ապրանք է, ինչպես ամեն մի ապրանք, ուստի և նրա գինը վորոշվում է ճիշտ նույնպիսի որենքներով, ինչպես ամեն մի ապրանքի գինը։ Ապրանքի գինը խոշոր արդյունագործության կամ ազատ մրցման—վորը, ինչպես կոտենենք, միևնույնն է—տիրապետության ժամանակ միջին հաշվով միշտ հավասար է այդ ապրանքի արտադրական ծախքերի գնին։ հետևաբար աշխատանքի¹⁾ գինը նույնպես հավասար է աշխատանքի արտադրության ծախքերին։ Իսկ աշխատանքի արտադրության ծախքերը կազմում են գոյության հենց այն միջոցները, վորոնք անհրաժեշտ են բանվորին աշխատունակ պահելու և բանվոր դասակարգին բնաջնջումից փրկելու համար։ Բանվորը, հետևապես, իր աշխատանքի

1) «Աշխատանք» բառը գործ է ածված այստեղ «աշխատանքի ուժ» *) բառերի փոխարեն, վոր նշանակում է սպառողական իրերի արտադրության ընթացքում գործելու, արտադրության մեջ գործադրվող մեքենաներին սպասարկելու կամ անտեսական մյուս ասպարեղներում աշխատանք մատուցելու պատկերացում (կարողություն), ընդունակություն։ Այդ ուժի կամ ատակության կիրառությունն է, վոր ծախում է բանվորը՝ կամ վորոշ ժամանակով, կամ ել վորոշ մասնիկով, ըստ վորում ստացվում է այն տպավորությունը, վոր իբր թե բանվորին վճարվող վարձը պարունակում է իր մեջ արտադրանքում մարմնացած աշխատանքի կամ ծառայության արժեքը։ Այնինչ՝ իրապես բանվորն ստանում է, ինչպես Մարքսն է հայտարարել «կապիտալ»-ում, միայն գործադրած աշխատանքի ուժի համար։ Այդպես պիտի հասկացվի թե այս դեպքում և թե հետևյալ եջերում, ուր խոսվում է «աշխատանքի վաճառման», «աշխատանքի գնի» և այլն մասին։ Արտահայտություն այդ ձևերը այսուր ել գործ են ածվում և նույնիսկ տիրապետում են քաղաքատնտեսության վերաբերյալ գիտական գրքվածքներում։ Կարլ Մարքսը իր «Կապիտալ»-ում ապացուցել է, վոր դրանք հասարակական հարաբերությունների իմաստից զուրկ բացատրություններ են։ Դրանով ել նա վերացրել է այն հակասությունները, վորոնք բղրում են այդ «ժողովրդականացած» արտահայտության ձևերից, և մերկացրել է «համեմատ արժեքի» գաղտնիքը։ Յերբ ենդելը շարադրել է իր սույն աշխատությունը, այդ հին տերմինները Մարքսն ել եր տակավին գործածում իր տնտեսագիտական գրվածքներում։

Ե. Բեհմեսայն

*) Arbeitskratt, Рабочая сила։ Այդ տերմինը սովորաբար թարգմանում են «բանվորական ուժ»։ Սակայն դա իմաստից զուրկ հասկացողություն է, վոր մինչև որս ել դրծ է ածվում՝ առանց ստուգաբանության և պահվում է պահպանողականության շնորհիվ։ Մարքսային ուժը չի կարող լինել՝ բանվորական, բուրժուական կամ ավաղական, ինչպես են՝ որինակի համար՝ լրագիրը, դասակարգը, կուսակցությունը և այլն։ Մարքսային որգանիցմում գտնվող այն յեռանդը, վոր թափվում է՝ այս կամ այն նյութը ձեռք բերելու, այս կամ այն իրը պատրաստելու, այս կամ այն գործը կատարելու համար, ահա դա յն աշխատանքի ուժը։ Զի կարելի յեմնել այն տեսակետից, թե վորովհետև աշխատանքի ուժ կրողը գերազանցապես բանվորն է, ուստի

համար չի ստանում ավելի, քան թե պահանջում է վերոհիշյալ նպատակը։ Աշխատանքի գինը կամ աշխատավարձը պետք է, հետևապես, հավասար լինի այն նվազագույնին, վորն անհրաժեշտ է գոյության միջոցների համար¹⁾։ Բայց վորովհետև գործերը յերբեմն լավ, յերբեմն վատ են գնում, ուստի բանվորն ել յերբեմն շատ, յերբեմն քիչ է ստանում, ճիշտ այնպես, ինչպես գործարանատերը յերբեմն շատ, յերբեմն քիչ է ստանում իր ապրանքի համար։ Բայց ինչպես վոր գործարանատերը իր գործերի լավ և վատ ժամանակներում միջին հաշվով ստանում է յուր ապրանքի համար վոչ ավելի և վոչ նվազ, քան իր արտադրական ծախքերը, այնպես ել բանվորը միջին հաշվով ստանում է նույնպես վոչ ավելի և վոչ պակաս, քան

և կարելի յն «բանվոր» ու «աշխատանք» հասկացողությունները հոմանիշ դարձնել այդ դեպքում պետք է հոմանիշ դարձնել նաև պատմական ու տրամաբանական կատեգորիաները։ Յեթև ուղում ենք հասկացողության մեջ շեշտած լինել դասակարգային իմաստը, պիտի գործածենք «բանվորական» որինակի համար՝ բանվորական կուսակցություն (Arbeiterpartei), բանվորական լրագիր (Arbeiter-zeitung), բանվորական դասակարգ (Arbeiterklasse) և այլն։ Իսկ յեթև ուղում ենք արտահայտել այնպիսի յերկույթ, վորը կապված է աշխատանք հասկացողության հետ, պիտի կիրառենք այդ հասկացողությանը կապված յերկույթն արտահայտող բառը, որինակի համար՝ աշխատանքի վարձ (Arbeitslohn), աշխատանքի nr (Arbeitstag), աշխատանքի ժամանակ (Arbeitszeit) և այլն։

Ս. Կ.

1) Մարքսը «Կապիտալ»-ում ուղղել է այն միտքը, թե բանվորը վարձի միջոցով ստանում է իր կյանքի պահպանության համար անհրաժեշտ նվազագույնը։ Տվյալ յերկրի կուլտուրական բարձրության համաձայն՝ բանվորի կյանքի պահպանության համար պահանջվող անհրաժեշտություններն են պատկանում կարեքներ բավարարող այն միջոցները, վորոնք այլ ևս չեն մտնում սոսկ աղքատիկ անդի շրջանակի մեջ։ Յեթև բանվորի վարձն այնքան է, վոր նա կարողանում է միայն պահպանել իր սոսկ գոյությունը, ապա նրա աշխատանքի ուժը վաճառվում է իր արժեքից ցածր. այդ դեպքում աշխատանքի ուժը պահպանվում է զարգացվում է վոչ թե նորմալ կեցակցի, այլ «միայն հյուժող պայմաններում» (Մարքս)։ Դա կապիտալիստական մրցատեսակության տեղեկնցն է, վոր միշտ ձգտում է տանել աշխատավարձը գեպի այն նվազագույն պայմանը, ինչպես վոր նա ընդհանուր առմամբ ձգտում է ապրանքի գինը իր արժեքից իջնցնել։ Սակայն վարձը գեպի բացարձակ նվազագույն չափն իջնցնելու այդ տենդենցը առաջ է բերում կասեցնող ֆակտորներ։ Այդ ֆակտորներից են պատկանում բանվորի այն պահանջները, վորոնք պայմանավորվում են յերկրի կուլտուրական բարձրությամբ, ինչպես և այն գրություններ, վորոնք մեջ ենդել ու զարգացել է այդ յերկրի բանվոր դասակարգը։ Մյուս ապրանքների հակադրումը պարունակում է իր մեջ պատմական և բարոյական ելեմենտ (Ի հատ., ԻՊ ԳԼ, 3 ստորաբաժին՝ «Աշխատանքի ուժի առևտուր»)։

Ե. Բ.

թե հենց այդ նվազագույնը: Սակայն աշխատավարձի այդ տրնտեսական որոշումը այնքան ավելի խիստ է իրագործվում, փորքան ավելի յե խոշոր արդյունաբերությունը տարածվում աշխատանքի բոլոր ճյուղերում:

Յ-րդ շԱՐՑ.— Խնչ առիաւսագ դասակարգե գոյութուն ունեյին արդյունագործական հեղափոխութունից առաջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Աշխատող դասակարգերը, նայած հասարակական զարգացման աստիճանին, ապրել են տարբեր պայմաններում և ունեցել տարբեր դիրք ունեւոր ու իշխող դասակարգերի հանդեպ: Հին դարերում աշխատավորները ունեւորների ստրուկներն էին, ինչպես այժմ էլ (այսինքն 1847 թ.) հետամնաց յերկրներում և մինչև անգամ Միացյալ Պետությունների հարավային մասում են: Միջին դարերում նրանք կալվածատեր ազնվականների նորսերն էին, ինչպես այժմ էլ (1847 թ.) Հունգարիայում, Լեհաստանում և Ռուսաստանում են: Բացի այդ, քաղաքներում միջին դարերից սկսած մինչև արդյունագործական հեղափոխությունը գոյություն ունեյին արհեստավոր-ստաւարներ, փորոնք աշխատում էին մանր-բուրժուական վարպետների մոտ, իսկ մանուֆակտուրայի զարգացմամբ հետըզհետե առաջ յեկան ձեռագործարանային բանվորներ, փորոնց արդեն վարձում էին խոշոր կապիտալիստները:

7-րդ շԱՐՑ.— Խնչով և թարբերվում պրոլետար ստրուկից:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Ստրուկը վաճառված է մի անգամ ընդ միշտ: Պրոլետարն ստիպված է ինքզինքը վաճառել ամեն ուր և ամեն ժամ: Ստրուկը ախրոջ սեփականությունն է և հենց այդ ախրոջ շահի շնորհիվ էլ ունի ապահով գոյություն, վորքան և վերջինս փողորմելի լինի: Պրոլետարը այսպես ասած սեփականություն է ամբողջ բուրժուա դասակարգի, փորին նա վաճառում է իր աշխատանքն այն դեպքում միայն, յեթե դրա պահանջը կա, և չունի ապահով գոյություն: Այդ գոյությունն ապահովված է միմիայն փող թանվոր դասակարգի համար: Ստրուկը մրցումից դուրս է գտնվում, իսկ պրոլետարը յեն-

թակա յե մրցման և կրում է վերջինիս բոլոր տատանումները: Ստրուկը համարվում է մի իր, առարկա, նա չի ճանաչվում վորպես քաղաքացիական հասարակության անդամ, իսկ պրոլետարը անձ է և անգամ բուրժուական հասարակության: Ստրուկը կարող է ապրել ավելի լավ պայմաններում, քան պրոլետարը, իսկ պրոլետարը պատկանում է հասարակության, վորը գտնվում է զարգացման բարձր աստիճանի վրա, և նա ինքն էլ գտնվում է ավելի բարձր աստիճանի վրա, քան ստրուկը: Ստրուկը կարող է ազատագրվել, յեթե բոլոր սեփականային հիմնարկություններից վերանա միմիայն ստրկությունը և այդպիսով դառնալ պրոլետար: Իսկ պրոլետարը միմիայն կարող է ազատագրվել, վերացնելով ընդհանրապես մասնավոր սեփականությունը:

Յ-րդ շԱՐՑ.— Խնչով և թարբերվում պրոլետար ծարից:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Ծորտը սեփականություն ունի և ոգտվում է արտադրության միջոցից, այսինքն մի կտոր հողից, տալով բերքի մի մասը կամ կատարելով վորևե աշխատանք: Պրոլետարն աշխատում է ուրիշի արտադրական միջոցներով և այդ ուրիշի հաշվին, ստանալով յեկամտի մի մասը: Ծորտը վճարում է, իսկ պրոլետարն ստանում է վարձ: Ծորտն ունի ապահովված գոյություն, իսկ պրոլետարն այդ չունի: Ծորտը մրցումից դուրս է, իսկ պրոլետարը յենթակա յե մրցման: Ծորտն ազատագրվում է՝ կամ քաղաք փախչելով ու արհեստավոր դառնալով, կամ աշխատանքի ու բերքի փոխարեն իր հողատիրոջը փող տալով և ազատ կապալառու դառնալով, կամ էլ քշելով իր ավատին և ինքը սեփականատեր դառնալով: Կարձ՝ ծորտն ազատագրվում է շնորհիվ այն հանգամանքի, վոր այս կամ այն ճանապարհով անցնում է ունեւոր դասակարգի շարքերը և յենթադրվում մրցման: Պրոլետարն ազատագրվում է, վորջնացնելով մրցումը, մասնավոր սեփականությունը և դասակարգային բոլոր խտրությունները:

9-րդ շԱՐՑ.— Խնչով և թարբերվում պրոլետար արհեստավորից:

(ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԻ զԺՆՎԵԼ ԵՐԳԵԼՍԻ ձԵՆԱԳՐՈՒՄ) ¹):

10-րդ շաբաթ, — Լեւոն⁴ վ ե արքերիովս պրովեսարս մանուկակատարային
բանվորից:

ՊԱՏԱՍԽԱՆ.—XVI-ից մինչև XVIII-րդ դարու մանուֆակտուրային (ձեռագործարանային) բանվորը գրեթե ամենուրեք տակավին տեղ եր արտադրական գործիքների, ունեւր իր ջուր հակի կայանքը, իր ձախարակը ընտանիքի համար, մի կտոր հող, վորը նա մշակում եր ազատ ժամերին: Պրոլետարը գուրկ ե այդ բոլորից: Մանուֆակտուրային բանվորը գրեթե միշտ գյուղումն եր ապրում ե գտնվում տաւիւլ կամ նվաղ նահապետական հարաբերությունների մեջ իր հողատիրոջ կամ աշխատանք տվողի հետ. իսկ պրոլետարը, մեծ մասամբ, ապրում ե խոշոր քաղաքներում ե իրեն աշխատանք տվողի հետ գտնվում գուտ դրամական հարաբերության մեջ: Խոշոր արդյունագործությունը գուրս ե կորցում մանուֆակտուրային բանվորին նահապետական հարաբերություններից, զրկում նրան սեփականությունից ե այդպիսով նրան դարձնում պրոլետար:

11-րդ ՀԱՐՑ:—Վարո՞՞նք էլին արդյունագործական հեղափոխության յեզ հաստատվելւոյան յերկու դասակարգերի՝ բուրժուաների ու պրոլետարների բաժանման մեծավոր հիսեվանքները:

[illegible]

ՊԱՏԱՍԽԱՆ.—Նախ և առաջ բոլոր յերկրներում ամբողջապես քայքայվեց մանուֆակտուրային կամ ձեռքի աշխատանքի վրա հիմնված արդյունագործական սխտեմը, վորովհետև մեքենային աշխատանքն անընդհատ զցուծեց և արդյունագործական արտադրանքների գները: Բոլոր կիսաբարբարոս յերկրները, վորոնք մինչև այդ առավել կամ նվազ չափով հեռու էին մնացել հասարակական զարգացումից և վորոնց արդյունագործությունը մինչև այդ հիմնված էր մանուֆակտուրայի վրա, բռնությամբ դուրս էին բերվում իրենց ինքնամիտք դրությունից: Նրանք գնում էին անգլիացիների եփան ապրանքները և այդպիսով քայքայման մատնում իրենց ձեռագործարանային բանվորներին: Դարերի ընթացքում հառաջադիմական վոչ մի քայլ չարած յերկրները, ինչպես որինակ Հնդկաստանը, հիմնովին հեղաշրջվեցին, և մինչև անգամ Չինաստանը կանգնած է հեղաշրջման առջև: Բանն այնտեղ և հասել, վոր Անգլիայում այսօր հայտնագործած մի նոր մեքենա մեկ տարվա ընթացքում միլիոնավոր բանվորներ և զրկում հացից Չինաստանում: Այդ յեղանակով խոշոր արդյունագործությունն իրար հետ և շաղկապել յերկրագնդի բոլոր ժողովուրդներին, տեղական բոլոր մանր շուկաները միացրել ու

ցում ալիպսիսի մի մասի արտադրութեան մասնակի պրոցեսում, և նրա անձնակազմ համութեամբ, վորն առաւելապէս նշանակութեամբ ունի առաւելալի պատրաստութիւնը մասի քանակի, քան թէ վորակի համար, յետ և մղվում մեքենաների համեմատութեամբ։ Սատարը իր վարպետի նման յուր ամբողջ կայանքի ընթացքում պաշտպանված էր կործանարար մրցումից համբարային կանոնադրութեամբ կամ արհեստավորական սովորութեաններով, իսկ պրոլետարիատը պետք է միանա յուր ընկերներին կամ դիմե որևէ ոգնութեան, վորպեսզի շարորկի Մէխատանքի ու ժի պետք յեղածից ավելի առաւելութեանը նեղել և ձգում նրան։ Արհեստավորական սատարը՝ իր վարպետի նման՝ սահմանափակ էր, ինկզուրիտ, կատայական վոգում սոցիալական, բոլոր նորմալութեաններին թշնամի, իսկ պրոլետարի համար յուրքանշյուրը վարչական շոշափելի յետ և, վոր իր դասակարգի շահերը արմատապէս տարբեր են կապիտալիստներին դասակարգի շահերից, կատայական վոգում փոխարեն նրա մէջ առաջանում և դասակարգային գիտակցութեամբ և գիտակցութեամբ այն բանի, վոր իր դասակարգի դրութեան բարիքումը պետք է փնտռել հասարակական գորգացման մէջ։ Արհեստավորական սատարը միշտ ռեակցիոն և յեղել, մինչև իսկ այն ժամանակ, յերբ նա ապտամբել է, իսկ պրոլետարի ավելի ու ավելի յետ հարկադրվում հեղափոխական դառնար Հասարակական այն գորգացումը, վորի դեմ ծառացավ սեակցիոն արհեստավորութեամբ, մանուֆակտուրան եր, արհեստի—վարպետի և սատարի—յնթարկումը վաճառականի կապիտալին, վորը հետագայում բաժանվեց առեւտրական և արդյունադրական կապիտալի։

համաշխարհային շուկա ստեղծել, ամենուրեք տարածել և քաղաքակրթություն ու հառաջադիմություն և ստեղծել մի դրություն, վորը քաղաքակրթ յերկրներում տեղի ունեցածը պետք է ազդի բոլոր մյուս յերկրների վրա, այնպես վոր՝ յեթե այժմ Անգլիայում և Ֆրանսիայում ազատագրվեն բան-վորները, ապա բոլոր մյուս յերկրներում ևս պետք է առաջ գա հեղափոխություն, վորը վաղ թե ուշ նույնպես առաջ կբերի տեղական բանվորների ազատագրումը:

Յեղիորդ՝ ամենուրեք, ուր խոշոր արդյունադործությունը բռնել է մանուֆակտուրայի տեղը, բուրժուազիան խոշոր չափերի յե հասցրել իր հարստությունն ու իր ազդեցությունը և դարձել յերկրի առաջին դասակարգը: Դրա հետևանքը յեղավ այն, վոր ամեն տեղ, ուր կատարվել է այդ պրոցեսսը, բուրժուազիան իր ձեռքն է առել քաղաքական իշխանությունը և հետ մղել մինչ այդ տիրապետող դասակարգերին՝ ազնվական-նությունը, համբարային արհեստավորներին և դրանց ներկա-յացուցիչ բացարձակ միապետությունը: Բուրժուազիան վոչն-չացրեց արիստոկրատիայի, ազնվականության իշխանությունը, վերացնելով մայորատը կամ խոշոր կալվածների վաճառման արգելքները և ազնվականների բոլոր առանձնաշնորհումները: Նա խորտակեց համբարային արհեստավորների իշխանությունը, վերացնելով համբարությունը և արհեստավորների առանձնա-շնորհումները: Այդ յերկուսի փոխարեն նա սահմանեց ազատ մրցումն, այսինքն հասարակական այնպիսի դրություն, վորն իրավունք է տալիս ամեն մեկին պարապել արդյունադործու-թյան ցանկացած ճյուղով՝ առանց վորևե արգելքի, բացի պա-հանջված կապիտալի պակասությունից: Ազատ մրցման սահ-մանումն այդպիսով վոչ այլ ինչ է, քան յեթե բացահայտ հայ-տաբարումն, թե այսուհետև հասարակության անդամները այն չափով են միայն հավասար, վորչափով հավասար են նրանց կապիտալները, թե կապիտալը դառնում է վճռական ույժ և ընդ սմին կապիտալիստները, բուրժուաները կազմում են առա-ջին դասակարգը հասարակության մեջ: Ազատ մրցումը խոշոր արդյունադործության սկզբնական շրջանի համար անհրաժեշ-

տություն է, վորովհետև՝ դա հասարակական այն միակ դրու-թյունն է, ուր կարող է առաջ գալ խոշոր արդյունադործու-թյունը: Ազնվականության և համբարության հասարակական իշխանությունը վոչնչացնելուց հետո, բուրժուազիան վոչնչա-ցրեց նաև նրա քաղաքական իշխանությունը: Ինչպես վոր նա հասարակության մեջ հասավ առաջին դասակարգի աստիճա-նին, այնպես էլ նա հայտարարեց իրեն վորպես առաջին դա-սակարգ քաղաքականության մեջ: Նա իրագործեց այդ, մացը-նելով ներկայացուցչական սիստեմ, վորը հիմնված է բուրժուա-կան հավասարության վրա՝ որենքի առջև, ազատ մրցման որի-նական ճանաչման վրա: Այդ սիստեմը իրագործված է յեվրո-պական յերկրներում սահմարադրական միապետության ձևով: Այդ սահմանադրական միապետություններում ընտրական իրավունք ունեն միմիայն նրանք, վորոնք տեղ են վորոշ կապիտալի, հետևապես միայն բուրժուաները: Այդ բուր-ժուա ընտրողներն ընտրում են պատգամավորներ, իսկ այդ բուրժուա պատգամավորներն ընտրում են բուրժուական կա-ռավարություն՝ հարկ չտալու իրավունքի պայմանով:

Յեղիորդ՝ արդյունադործական հեղափոխությունն ամենու-րեք նպաստեց պրոլետարիատի զարգացմանը այն չափով, ինչ չափով վոր բուրժուազիայի զարգացմանը: Վորքան հարստա-նում ելին բուրժուաները, այնքան էլ աճում եր պրոլետար-ների թիվը: Վորովհետև պրոլետարները կարող են աշխատանք գտնել միմիայն կապիտալի միջոցով, իսկ կապիտալն աճում է միայն այն ժամանակ, յերբ նա աշխատանք է տալիս բանվոր-ներին, ուստի և պրոլետարիատի բազմացումը համապատաս-խանում է կապիտալի աճմանը: Արդյունադործական հեղաշը-ջումը միևնույն ժամանակ համախմբում է բուրժուաներին, ինչպես նաև պրոլետարներին խոշոր քաղաքներում, վորոնք ավելի նպաստավոր պայմաններ են ընձեռում արդյունադոր-ծությանը և այդ խոշոր զանգվածների համախմբմամբ պրոլե-տարներին ներշնչում իրենց ուժի գիտակցությունը: Այնու-հետև վորքան ավելի յե զարգանում արդյունադործական հե-ղափոխությունը, վորքան ավելի յե հայտնադործվում նոր մե-

քենաներ, վորոնք հետ են մղում ձեռքի աշխատանքը, այնքան ել խոշոր արդյունագործությունն ավելի յե իջեցնում աշխատավարձը, հասցնելով այն մինիմումի, ինչպես արդեն ասացինք վերը, և այդպիսով ավելի ու ավելի անտանելի դարձնում պրոլետարիատի վիճակը: Այդպես՝ մի կողմից պրոլետարիատի աճող դժգոհությամբ, մյուս կողմից նրա աճող ուժի միջոցով արդյունագործական հեղաշրջումը նախապատրաստում է պրոլետարիատի կատարելիք սոցիալական հեղափոխությունը:

12-րդ շարք.—Վոր՝ոնք եյին արդյունագործական հեղափոխության մյուս հեռավանգները:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Խոշոր արդյունագործությունը՝ շոգու և այլ մեքենաների շնորհիվ՝ ստեղծեց միջոց, վորը կարճ ժամանակում և քիչ ծախքերով մեծ չափերի հասցրեց արդյունագործական արտադրությունը: Այդ խոշոր արդյունագործությունից անհրաժեշտորեն առաջ յեկած ազատ մրցումը շուտով ընդունեց ծայրահեղ սուր բնույթ՝ շնորհիվ այդ հեշտ արտադրության: Մեծ թվով կապիտալիստներ նետվեցին արդյունագործության ասպարեզը, և կարճ ժամանակում ավելի շատ արտադրվեց, քան կարելի յեր սպասել: Դրա հետևանքը յեղավ այն, վոր արտադրված ապրանքները չվաճառվեցին, և վոր՝ առաջ յեկավ այսպես կոչված առևտրական ճգնաժամ: Գործարաններն ստիպված եյին կանգ առնել, գործարանատերերը սնանկացան, և բանվորները գրկվեցին հացից: Ամենուրեք առաջ յեկավ սոսկալի թշվառություն: Ժամանակի ընթացքում վաճառվում են ավելորդ արտադրանքները, գործարանները կրկին սկսում են աշխատել, աշխատավարձը բարձրանում է, և հետզհետե գործերը կրկին ընթանում են ավելի լավ, քան յերբևե: Բայց յերկար չի տևում այդ. կրկին արտադրվում են շատ ապրանքներ, և առաջ է գալիս նոր ճգնաժամ, վորը ճիշտ նույն ընթացքն է ունենում, ինչ վոր նախորդը: Այսպես ներկա դարու սկզբից արդյունագործությունն անընդհատ տատանվում էր ծաղկման և ճգնաժամի ժամանակաշրջանների միջև: Յեվ գրեթե կանոնա-

վոր կերպով յուրաքանչյուր հինգ-յոթ տարին մի անգամ առաջ եր գալիս այդպիսի ճգնաժամ, վորը յուրաքանչյուր անգամ կապված էր լինում բանվորների ահռելի թշվառության, ընդհանուր հեղափոխական հուզումի և գոյություն ունեցող վողջ հասարակարգի նկատմամբ՝ մեծամեծ վտանգների հետ:

13-րդ շարք.—Խեչ և հեռավոր կանոնավորապես կրկնվող այդ առավելագույն ձգնաժամերն:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Առաջին՝ խոշոր արդյունագործությունը, թեև իր դարգացման առաջին շրջանում ինքն ստեղծել է ազատ մրցումն, այնուամենայնիվ այժմ գերազանցել է ազատ մրցումից: Մրցումն, ինչպես և այն, վոր արդյունագործական արտադրության ղեկավարությունն ընդհանրապես գտնվում է առանձին ձեռքերում, դարձել են շղթաներ, վոր պետք է փշրի և փշրելու յե խոշոր արդյունագործությունը: Խոշոր արդյունագործությունը, քանի դեռ նա տարվում է այնպես, ինչպես մինչև այժմ, կարող է գոյություն ունենալ միմիայն յոթ տարին մի անգամ կրկնվող ընդհանուր խառնաշփոթյան շնորհիվ, վորը ամեն անգամ սպառնում է վողջ քաղաքակրթությանը և վոչ միայն թշվառության մեջ ձգում պրոլետարներին, այլ և քայքայում շատ բուրժուաների: Նետևաբար պետք է կամ վերացնել խոշոր արդյունագործությունը, վոր բացարձակապես անկարելի յե, կամ ել անհրաժեշտաբար ստեղծել հասարակական մի բոլորովին նոր կազմակերպություն, ուր արդյունագործական արտադրությունը կղեկավարեն վոչ թե իրար հետ մրցող գործարանատերերը, այլ վողջ հասարակությունը՝ վորոշ ծրագրի և քաղաքացիների պահանջների համաձայն:

Յեկուրդ՝ խոշոր արդյունագործությունը և դրա շնորհիվ արտադրության անսահման ընդարձակումն հնարավոր են դարձնում հասարակական այնպիսի կարգեր, ուր՝ կենսական բոլոր պահանջները բավարարելու համար՝ կարտադրվի այնքան, վոր քան պահանջում է հասարակության յուրաքանչյուր անդամի բոլոր ուժերի և ունակությունների լիակատար զարգացումը: Այդպիսով խոշոր արդյունագործության հենց այն հատկանիշը, վորն արդի հասարակության մեջ առաջ է բերում թշվառու-



թյուն և առևտրական ճգնաժամեր, հենց այդ հատկանիշն է, վոր վերացնելու յե այդ նույն թշվառությունը և դժբախտություն սնուցող տատանումները հասարակական այլ կազմակերպության շնորհիվ: Ուրեմն բացահայտորեն ապացուցվում է.

1. Վոր ներկայումս այդ բոլոր չարիքները վերադրվելու յեն՝ հասարակական կարգերին այլ ևս չհամապատասխանող հարաբերություններին:

2. Վոր կան միջոցներ այդ չարիքները հիմնովին վերացնելու՝ նոր հասարակարգի հաստատմամբ:

14-րդ շԱՐՑ.— Ենչախի՛՛ն և լինելու այդ ցոր հասարակարգը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Ամենից առաջ արդյունագործության և ընդհանրապես արտադրության բոլոր ճյուղերի ղեկավարությունը խլվելով առանձին, իրար հետ մրցող սահմանների ձեռքից, հանձնվելու յե փողջ հասարակության տնորինությանը, այսինքն առավելու յե հասարակության հաշվին ընդհանուր ծրագրով և հասարակության բոլոր անդամների հանրային վերահսկողությամբ: Այդպիսով կվերացվի մրցումն ու կփոխարինվի աստօցիացիայով: Բայց փորովհետև արդյունագործության առանձին անհատների ղեկավարության անխուսափելի հետևանքը մասնավոր սեփականութունն է, իսկ մրցումը վոչ այլ ինչ է, քան յեթե մասնավոր սեփականութունը անքակտելիորեն կապված է արդյունագործության իրարից անկախ ձեռնարկությունների և մրցման հետ: Ուրեմն մասնավոր սեփականութունը պետք է նույնպես վերացվի ու փոխարինվի արտադրության բոլոր միջոցների ընդհանուր օգտագործմամբ և ընդհանուր համաձայնությամբ բոլոր արդյունքների բաշխումով, այսինքն այսպես կոչված բարիքների հանրությամբ: Մասնավոր սեփականության վերացումն ամենակարճ և բնորոշ ըմբռնումն է փողջ հասարակարգի այն հեղաշրջման, վորը կազմում է արդյունագործության զարգացման անհրաժեշտ հետևանքը: Յեվ զրա համար ել կոմունիստներն իրավամբ առաջադրում են մասնավոր սեփականության վերացումը, վորպես զվստվոր պահանջ:

15-րդ շԱՐՑ.— Առաջ, ուրեմն, հնարավոր չե՛ր մասնավոր սեփականության վերացումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Վնչ: Հասարակական կարգերի յուրաքանչյուր փոփոխումն, սեփականային հարաբերությունների յուրաքանչյուր հեղաշրջումն անհրաժեշտ հետևանք է յեղել նոր արտադրողական ուժերի զարգացման, վորոնք այլ ևս չենին հարմարվում հին սեփականային հարաբերություններին: Ինքը մասնավոր սեփականությունն ել այդպես է առաջ յեկել: Մասնավոր սեփականությունը գոյություն չի ունեցել միշտ: Յերբ միջին դարու վերջերին առաջ յեկավ արտադրության նոր յեղանակ, այսինքն մանուֆակտուրան, վորը չեր կարող հարմարվել այն ժամանակվա ավտոտական և համբարային սեփականությանը, ապա այդ հին սեփականային հարաբերություններից ծնունդ առած մանուֆակտուրան ստեղծեց սեփականության մի նոր ձև՝ մասնավոր սեփականությունը: Մանուֆակտուրայի համար և խոշոր արդյունագործության զարգացման առաջին աստիճանի համար հնարավոր չեր սեփականության մի այլ ձև, քան մասնավոր սեփականությունը, չեր կարող լինել մի այլ հասարակարգ, քան մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակարգը: Քանի դեռ չի կարելի արտադրել այնքան, վորքան անհրաժեշտ է վոչ միայն ամենքին բավարարություն տալու, այլ և նրա համար, վորպեսզի արդյունքների ավելցուկ մնա՝ հասարակական կապիտալը բազմացնելու և արտադրողական ուժերն ավելի զարգացնելու համար, մինչև այդ՝ պետք է միշտ լինեն— իշխող, հասարակության արտադրողական ուժերը տնորինող դասակարգ և աղքատ ու ճնշված դասակարգ: Այդ դասակարգերին տարբերող հատկությունները բնորոշվում են արտադրության զարգացման աստիճանով: Յերկրագործության հետ կապված միջին դարերը տալիս են մեղ բարոն և ճորտ. ուշ միջնադարի (միջնադարի վերջին շրջանի) քաղաքացիները յերևան են հանում համբարային վարպետ, սատար և որով աշխատող բանվորներ. տասնյոթերորդ դարը տալիս է մանուֆակտուրայի տեր և մանուֆակտուրայում աշխատող բանվորներ. տասնիններորդ դարը՝ խոշոր գործարանատեր և պրոլետարներ: Պարզ է, վոր մինչև այժմ արտադրու-

դական ուժերը դեռ այնքան զարգացած չեն յեղել, վոր արտադրութիւնը կարողանար ամենքին տալ արտադրանքներն անհրաժեշտ քանակը: Պարզ է նաև, վոր մասնավոր սեփականութիւնը դարձել էր այդ արտադրողական ուժերի խոչընդոտը, կապանքը: Միայն այժմ, յերբ խոշոր արդյունաբերութեան զարգացման շնորհիվ նախ՝ գոյութիւն ունին կապիտալիստներ և արտադրողական ուժեր ցարդ չտեսնված չափով, ինչպես նաև միջոցներ՝ այդ արտադրողական ուժերը կարճ ժամանակուս անսահմանորեն ավելացնելու. յերբ յերկրորդ՝ այդ արտադրողական ուժերը կենտրոնացած են փոքրաթիվ բուրժուաների ձեռքում, այնինչ ժողովրդի խոշոր զանգվածներն ավելի ու ավելի յեն պրոլետարանում, վերջիններս վեճակը նույնչափ թշուառ և անտանելի յե դառնում, վորչափ ավելանում է բուրժուազիայի հարստութիւնը. յերբ յերկրորդ՝ այդ վիթխարի և հեշտութեամբ բաղմացող արտադրողական ուժերն այնքան են գերաճել մասնավոր սեփականութեան և բուրժուազիայի նկատմամբ, վոր հասարակական արդի կարգերում ամեն վայրկյան հարուցանում են բռնի վայրկերումներ, — միայն այժմ է, վոր վոչ միայն հնարավոր է մասնավոր սեփականութեան վերացումն, այլ մինչև անգամ այն դարձել է բացարձակապես անհրաժեշտ:

16-րդ շԱՐՑ.— Հնարավոր էլինի մասնավոր սեփականության վերացումը խաղաղ ձևապաշտով:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Դա ցանկալի կլիներ, և կոմունիստներն ի հարկե կլինեն վերջինը՝ դրան դեմ յեղողներէն: Կոմունիստները շատ լավ գիտեն, վոր բոլոր դավադրութիւնները վոչ միայն անողուտ են, այլ և չափազանց ֆուսսակար: Նրանք շատ լավ գիտեն, վոր հեղափոխութիւնները չեն արվում դիտմամբ և քմահաճորեն, այլ ամեն տեղ և ամեն ժամանակ հեղափոխութիւնները յեղել են անհրաժեշտ հետևանք այն հանգամանքների, վորոնք քաղաքականապես անկախ են յեղել այս կամ այն կուսակցութեան և ամբողջ դասակարգերի կամքէն ու դեգավակութիւնէն: Սակայն նրանք տեսնում են նույնպես, վոր պրոլետարիատի զարգացումը գրեթե բոլոր քաղաքակիրթ յերկր-

ներում ճնշվում է բռնութեամբ և հենց այդպիսով էլ կոմունիստների հակառակորդներն ամեն կերպ ջանում են հարուցանել հեղափոխութիւն: Յեւ յեթե այդպիսով ճնշված պրոլետարիատն ստիպված լինի, վերջ ի վերջո, դիմել հեղափոխութեան, ապա մենք կոմունիստներս գործով կպաշտպանենք պրոլետարիատի շահերը ճիշտ այնպես, ինչպես այժմ պաշտպանում ենք խոսքով:

17-րդ շԱՐՑ.— Հնարավոր էլինի՞ մի հարվածով վերացնել մասնավոր սեփականությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Վոչ, անկարելի յե, ինչպես վոր անկարելի յե մի հարվածով զարգացնել արդեն գոյութիւն ունեցող արտադրական ուժերը, վորոնք անհրաժեշտ են արտադրութիւնը հասարակայնացնելու համար: Ըստ այդմ՝ պրոլետարիատի վերահաս հեղափոխութիւնն ամենայն հավանականութեամբ միայն հետգհետե կկերպարանափոխե արդի հասարակութիւնը և ապա կվերացնի մասնավոր սեփականութիւնը, յերբ արդեն անհրաժեշտ չափով ստեղծված լինեն արտադրութեան միջոցներ:

18-րդ շԱՐՑ.— Ենչպիսի բերացք կունենա այդ հեղափոխությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Ամենից առաջ նա կհաստատի դեմոկրատական կարգեր և այդպիսով՝ ուղղակի կամ անուղղակի՝ պրոլետարիատի քաղաքական իշխանութիւնը: Ուղղակի կերպով՝ Անգլիայում, ուր պրոլետարներն արդեն կազմում են ժողովրդի մեծամասնութիւնը: Անուղղակի կերպով՝ Յրանսիայում և Գերմանիայում, ուր ժողովրդի մեծամասնութիւնը կազմում են վոչ միայն պրոլետարները, այլ և մանր գյուղացիներն ու մանր բուրժուաները, վորոնք տակավին գտնվում են պրոլետարիատի շարքերն անցնելու ճանապարհին, իրենց բոլոր քաղաքական շահերով ավելի կենթարկվեն պրոլետարիատին և շուտով ստիպված կլինեն համակերպվել նրա պահանջներին: Դրա համար գուցե հարկավոր լինի մի յերկրորդ պայքար, վորը սակայն կվերջանա պրոլետարիատի աներկբա հաղթանակով: Եւեմոկրատիան միանգամայն անողուտ կլինի պրոլետարիատի համար, յեթե նա իսկույն և յեթ չօգտագործվեր վորպես մասնավոր սեփականութեան հիմքերը խախտող և պրոլետարիատի գոյու-

թյունն ապահովող միջոց: Այժմ իսկ գոյութիւն ունեցող հարաբերութիւնների անհրաժեշտ հետեանքը կազմող այդ միջոցներից ամենազխաւորները հետեւյալներն են.

1. Մասնավոր սեփականութեան սահմանափակումն պրոգրեսիվ հարկերով, ժառանգութեան մեծ հարկերով, անուղղակի շառավիղի (յեղբայրների, յեղբորվորդիների և այլն) ժառանգութեան իրավունքի վերացումով, հարկադրական փոխառութիւններով և այլն:

2. Կալվածատերերի, գործարանատերերի, յերկաթուղատերերի և նավատերերի աստիճանական բռնադրավումը՝ մասամբ պետական արդյունագործութեան մրցման միջոցով, մասամբ անմիջական վարձատրութեամբ պետական ասպիզնատներով [պետական թղթադրամով]:

3. Բոլոր փախստականների և ժողովրդի մեծամասնութեան դեմ ապստամբածների ունեցվածքի գրավումը:

4. Աշխատանքի կազմակերպումն կամ ազգային¹⁾ կալվածներում, գործարաններում և արհեստանոցներում՝ զբաղմունքի հայթայթումն պրոլետարներին, վորի շնորհիվ կվերանսմրցումն բանվորների միջև, իսկ գործարանատերերը, վորքան դեռ ևս գոյութիւն կունենան, ստիպված կլինեն վճարել բանվորներին այնպիսի աշխատավարձ, վորպիսին՝ պետութիւնը:

5. Մինչև մասնավոր սեփականութեան լիակատար վերացումն՝ հավասար պարտադիր աշխատանք հասարակութեան բոլոր անդամների համար: Արդյունագործական բանակները ստեղծումն, մանավանդ գյուղատնտեսութեան մեջ:

6. Վարկային սխտեմի և զբամի առևտրի կենտրոնացումն պետութեան ձեռքում՝ պետական կապիտալի վրա հիմնված ազգային բանկի միջոցով և բոլոր մասնավոր բանկերի ու բանկային գրասենյակների վերացմամբ:

7. Ազգային գործարանների, արհեստանոցների, յերկաթուղների և նավերի քանակական մեծացումն, բոլոր անպետք հողերի յենթարկումն մշակութի և արդեն մշակված հողերի բարելավումն այն չափով, վորչափ բազմաճանաչ էն ազգի տրամադրութեան տակ գտնվող կապիտալներն ու բանվորները:

¹⁾ Ազգային բառը գործ և ածված պետականի իմաստով:

8. Բոլոր մանուկների կրթութիւնն ազգային հիմնարկութիւններում և ազգային ծախքով այն մոմենտից, յերբ նրանք այլևս կարող չեն սկզբնական մայրական հոգատարութեան¹⁾:

9. Ազգային կալվածների վրա մեծ ապարանքների կառուցումն՝ վորպես հանրային կացարաններ այն քաղաքացիների համայնքի համար, վորոնք միաժամանակ պարապելու յեն ինչպէս արդյունագործութեամբ, այնպէս ել գյուղատնտեսութեամբ և միացնելու յեն քաղաքային ու գյուղական կյանքի առավելութիւնները, առանց կրելու այդ յերկու կենցաղների միակողմանիութիւններն ու թերութիւնները:

10. Բոլոր վատառողջ և անհարմար բնակարանների ու քաղաքամասերի ավերումն:

11. Ժառանգութեան հավասար իրավունք թե՛ ամուսնութիւնից և թե՛ վոչ ամուսնութիւնից ծնված զավակների համար:

12. Հաղորդակցութեան ամբողջ գործի կենտրոնացումն ազգի ձեռքում:

Այդ բոլոր միջոցներն, իհարկե, չեն կարող մի անգամից գործադրվել: Սակայն մեկին հաջորդելու յե մյուսը. հենց վոր տեղի ունենա առաջին արմատական հարձակումը մասնավոր սեփականութեան վրա, պրոլետարիատը հարկվադրված պիտի զգա իրեն՝ միշտ առաջ անցնել, ափելի ու ափելի կենտրոնանացնել պետութեան ձեռքում բոլոր կապիտալները, վողջ գյուղատնտեսութիւնը, վողջ արդյունագործութիւնը, բոլոր փոխադրական միջոցները, վողջ փոխանակութիւնը: Այդ ուղղութեամբ են գործելու բոլոր վերոհիշյալ միջոցները, և դրանք կիրականանան ու կզարգացնեն իրենց կենտրոնացուցիչ հետեանքները ճիշտ այն չափով, ինչ չափով վոր՝ շնորհիվ պրոլետարիատի աշխատանքի՝ կաճեն յերկրի արտադրական ուժերը:

¹⁾ Այստեղ ձեռագրում կան հետեւյալ կրճատ խոսքերը. «Կրթութիւն և ֆարքիկացիա միասին»: Պարզ և, վոր այդ արտահայտութիւնը պետք է ունենա այն միտքը, թե՛ զետեղիքների ավանդման հետ պետք է կապված լինի նաև աշխատանքի ավանդումն, բայց աշխատանքի ավանդումն վորոշ տարիքից բարձր բոլոր մանուկների համար լինելու յե այն, վոր արտադրական աշխատանքը պիտի կապվի ուսուցման և մարմնամարզութեան հետ, ինչպէս առաջարկել են Ռոբերտ Ռուենը և նրանից առաջ Ջոն Բեյլը, իսկ Մարքսը «Կապիտալ»-ում (հատոր 1, գլխ. 13, ստորաբաժին 9) արծարծել և այդ միտքը վորպէս խոշոր արդյունագործութեան անհրաժեշտ հետեանք: Համեմատիր Ֆրեդրիկ Ենգելս, «Գարոն Ոյգեն Դյուրինգի հեղաշրջումն զիտութեան», 3 բաժ. 5-րդ.

Վերջապես յերբ վողջ կապիտալը, վողջ արտադրութիւնը և վողջ փոխանակութիւնը կենտրոնանան աղբի ձեռքում, մասնավոր սեփականութիւնը կվերանա ինքնին, դրամը կդառնա ավելորդ, արտադրութիւնն այնքան կունձանա, և մարդիկ այնքան կփոխվեն, վոր կարելի կլինի հրաժարվել հին հասարակութեան մյուս բոլոր հարաբերութիւններէից։

19-րդ շարժ.— Եւրոպայի և այլ հեղափոխութեանը տեղի ունենալ մի յերկուս միայն։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Վոչ թողոր արդյունաբերութիւնը ստեղծելով համաշխարհային շուկա, այնպես է իրար հետ կապել յերկրագունդի բոլոր և մասնավոր քաղաքակիրթ ժողովուրդներին, վոր յուրաքանչյուր ժողովուրդ կախած է նրանից, թե ինչ է տեղի ունենում մի ուրիշ ժողովուրդի մոտ։ Այս նա բոլոր քաղաքակիրթ յերկրներում այնպես է հավասարեցրել հասարակական զարգացումը, վոր բոլոր այդ յերկրներում բուրժուազիան ու պրոլետարիատը կազմում են վճռական դեր խաղացող յերկու դասակարգերը, վոր այդ յերկու դասակարգերի կռիվը դարձել է որվա ամենատառաջնակարգ կռիվը։ Ուստի կոմունիստական հեղափոխութիւնը չի լինելու աղբային, նա տեղի յե ունենալու միաժամանակ բոլոր քաղաքակիրթ յերկրներում, այսինքն առնվազն Անգլիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում և Գերմանիայում։ Այդ յերկրներէից յուրաքանչյուրում նա կզարգանա ավելի արագ կամ ավելի դանդաղ, նայած թե դրանցից վորը կունենա ավելի զարգացած արդյունաբերութիւն, ավելի մեծ հարստութիւն, ավելի շատ արտադրական ուժեր։ Հետեւեալ Գերմանիայում նա տեղի կունենա ավելի դանդաղ ու դժվար, Անգլիայում ավելի արագ ու ավելի հեշտ։ Նա նշանակալից ազդեցութիւն կունենա յերկրագնդի մյուս յերկրների վրա, բոլորովին փոխելով և խլամ արագացնելով նրանց մինչայժմյան զարգացման ընթացքը։ Կոմունիստական հեղափոխութիւնը համաշխարհային հեղափոխութիւն է, ուստի և պիտի ունենա համաշխարհային սասպարեզ։

20-րդ շարժ.— Վորո՞նք կլինեն մասնավոր սեփականութեան վերացման հետեւանքները։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Հենց այն պատճառով, վոր հասարակութիւնը մասնավոր կապիտալիստների ձեռքից վերցնելու յե բոլոր արտադրական ուժերի [արտադրական միջոցների] և հաղոր-

դակցութեան միջոցների ոգտագործումը, ինչպես նաև արտադրանքների փոխանակութիւնն ու բաշխումը, հենց այն պատճառով, վոր նա կարգավորելու յե վողջ հասարակութեան կարիքներն ու ձեռքի տակ յեղած միջոցները համապատասխանող ծրագրով, ուստի և ամենից առաջ կվերացվեն այն բոլոր բացասական հետեւանքները, վորոնք դեռ կապված են խոշոր արդյունաբերութեան արդի կազմակերպութեան հետ։ Ճշմարտութիւնը կվերանան. ընդլայնված արտադրութիւնը, վոր ներկա հասարակական կարգերում առաջ է բերում գերարտադրութիւն և խոշոր պատճառ դառնում թշվառութեան, այն ժամանակ վոչ միայն կհամարվի անբավարար, այլ ավելի ևս պիտի ընդլայնվի։ Թշվառութիւն առաջ բերելու փոխարեն՝ գերարտադրութիւնը ապահովելու յե բոլոր քաղաքացիների պահանջների բավարարումն, ստեղծելու յե նոր պահանջներ և միևնույն ժամանակ սրանց բավարարելու միջոցներ։ Նա կհանդիսանա նոր հառաջադիմութեան նախապայմանն ու ազդակը, նա կիրադործի այդ հառաջադիմութիւնը, առանց խանգարելու հասարակակարգը, ինչպես դա տեղի յե ունենում մինչև այժմ։ Մասնավոր սեփականութեան լծից ազատված խոշոր արդյունաբերութիւնը կզարգանա այնպիսի չափերով, վոր նրա ներկա դրութիւնը մեզ կթվա այնպես չնչին, ինչպես մանուֆակտուրան մեր ուրերի խոշոր արդյունաբերութեան հետ համեմատած։ Արդյունաբերութեան այդ զարգացումը հասարակութեան տրամադրութեան տակ կդնի բավականաչափ արտադրանքներ, վորոնք բավարարութիւն կտան ամենքի պահանջներին։ Նույնպես և գյուղատնտեսութիւնը, վորը մասնավոր սեփականութեան ճնշմամբ և հողաբաժինների կտորակացմամբ չի կարողանում ոգտագործել արդեն ձեռք բերված կատարելագործումները և զիտական մեթոդները, կբարգավաճի նույնպես չտեսնված չափով և հասարակութեան տրամադրութեան տակ կդնի բավականաչափ արդյունքներ։ Այդ յեղանակով հասարակութիւնը ձեռք կբերի բավականաչափ արդյունքներ՝ բաշխելու այնպես, վոր բավարարվեն բոլոր անդամների պահանջները։ Հասարակութեան բաժանումը զանազան, իրար հակադիր դասակարգերի՝ կդառնա

այդպիսով ավելորդ: Նա կլինի վոչ միայն ավելորդ, այլ մինչև անգամ անհանդուրժելի նոր հասարակարգին: Դասակարգերի գոյութիւնն առաջ ե յեկել աշխատանքի բաժանումից, և աշխատանքի բաժանումն իր մինչայժմյան յեղանակով կվերանս ամբողջովին: Իսկ արդյունադործական և գյուղատնտեսական արդյունադործութիւնը վերոհիշյալ աստիճանին հասցնելու համար՝ բավական չեն մեխանիքական և քիմիական ոժանգակիչ միջոցները միայն: Պետք ե համապատասխան չափով զարգացած լինեն նաև այդ միջոցների գործադրութեամբ զբաղվող մարդկանց ընդունակութիւնները: Խնչպես վոր անցյալ [XVIII] դարու գյուղացիները և մանուֆակտուրային բանվորները՝ խոշոր արդյունադործութեան մեջ մտնելով՝ փոխում են իրենց կենցաղը և դառնում բոլորովին այլ մարդիկ, այնպես ել վողջ հասարակութեան ուժերով տարվող արտադրութիւնը և զբանից բղխող արդյունադործութեան նոր զարգացումը պահանջում են և կատեղծեն բոլորովին այլ մարդիկ: Արտադրութեան հասարակական ղեկավարումը չի կարող տեղի ունենալ մեր ժամանակվա մարդկանց միջոցով, վորոնցից յուրաքանչյուրը յենթարկված ե այս կամ այն ճյուղին, շղթայված նրան, յենթակա նրա շահագործմանը, և վորոնցից յուրաքանչյուրը զարգացնում ե իր հակումներէց միայն մեկը ի հաշիվ մյուսների, ծանոթ ե վողջ արտադրութեան միայն մեկ ճյուղին կամ ճյուղի ճյուղին: Արդեն այժմյան արդյունադործութիւնը ավելի ու ավելի քիչ ե ոգտագործում այդպիսի մարդկանց: Իսկ վողջ հասարակութեանը յենթակա արդյունադործութիւնը, վոր տարվելու յե վորոշ պլանով և հոգուտ հասարակութեան, ավելի յե կարիք ունենալու այնպիսի մարդկանց, վորոնց ընդունակութիւնները զարգացած են բազմակողմանի, և վորոնք ի փիճակի յեն ընդդէմ աբտադրութեան վողջ սիստեմը: Մեքենաների շնորհիվ այժմ արդեն խախտված աշխատանքի բաժանումը, վորը մեկին զարձնում ե գյուղացի, յերկրորդին՝ կռիակար, յերրորդին՝ գործարանային բանվոր, չորրորդին՝ բորսային սպեկուլյանտ, պիտի վերանս ամբողջովին: Կրթութիւնը հնարավորութիւն կտայ յերիտասարդներին արագորեն ծանոթանալու արտադրութեան վողջ սիս-

տեմի հետ, հնարավորութիւն կընձեռի նրանց հերթով արտադրութեան մեկ ճյուղից մյուսին անցնելու, նայած հասարակութեան կարիքներին կամ նրանց անձնական հակումներին: Այդպիսով կրթութիւնը կազատի նրանց այն միակողմանիութիւնից, վորին այժմ ստիպված ե յենթարկվել նրանցից յուրաքանչյուրը ժամանակակից աշխատանքի բաժանման շնորհիվ: Այդպես ուրեմն, կոմմունիստներն կազմակերպված հասարակութիւնը հնարավորութիւն կտա իր անդամներին բազմակողմանի կերպով ոգտագործելու իրենց բազմակողմանի զարգացած ունակութիւնները: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտորեն կվերանան և՛ առանձին դասակարգերը: Այդպիսով կոմմունիստներն կազմակերպված հասարակութիւնը մի կողմից՝ անհամատեղելի յե դասակարգերի գոյութեան հետ, իսկ մյուս կողմից՝ այդ հասարակութիւնն ինքը հանդիսանում ե դասակարգային տարբերութիւնների վերացման միջոցը:

Դրանից հետևում ե այն, վոր վերանալու յե նույնպես քաղաքի և գյուղի հակասութիւնը: Գյուղատնտեսութեամբ և արդյունադործութեամբ կզբաղվեն միեւնոյն մարդիկ, այլ վոչ թե յերկու տարբեր դասակարգեր: Դա կոմմունիստական աստոցիացիայի անհրաժեշտ պայմանն ե, վոր բղխում ե նյութական պատճառներից: Յերկրագործական բնակչութեան ցրվածութիւնը գյուղերում և արդյունադործական բնակչութեան կենտրոնացումը խոշոր քաղաքներում՝ մի դրութիւնն ե, վորը համապատասխանում ե գյուղատնտեսութեան և արդյունադործութեան տակալին անդարդացած աստիճանին և վորը հենց այժմ իսկ խիստ զգալի արգելք ե հանդիսանում վողջ զարգացմանը:

Հասարակութեան բոլոր անդամների ընդհանուր աստոցիացիա՝ արտադրական ուժերի հասարակայնորեն և պլանային շահագործման համար. արտադրութեան ընդլայնումն այնչափ, վոր նա բավարարե բոլորի պահանջները. վերացումն այն դրութեան, յերբ մեկի պահանջը բավարարվում ե ի հաշիվ մյուսների. հիմնական վերացումն դասակարգերի և սրանց հակասութիւնների. բազմակողմանի զարգացումն հասարակութեան բոլոր անդամների ունակութիւնների՝ աշխատանքի մինչայժմյան բաժան-

ման վերացմամբ, արդյունադործական կրթությամբ, գործունեության փոփոխմամբ, բոլորի ստեղծած բարիքներին բոլորի մասնակցությամբ, քաղաքի և գյուղի միաձուլմամբ, — սրանք են ահա մասնավոր սեփականության վերացման գլխավոր հետևանքները:

21-րդ շԱՐՑ:—Ի՞նչպիսի ազդեցություն կունենա կոմունիստական հասարակությունը բնակիչի վրա:

ՊԱՏԱՍԽԱՆ:—Յերկու սեռի հարաբերությունը կգտնա շահագրգռված անձերի մասնավոր գործ, վորի մեջ հասարակությունը գործ չունի խառնվելու: Այդ կարող է տեղի ունենալ մասնավոր սեփականության վերացմամբ և մանուկների հասարակական կրթությամբ, վորոնց շնորհիվ կվոչնչացվեն ժամանակակից ամուսնության մասնավոր սեփականությամբ պայմանավորված յերկու հիմքերը՝ կնոջ կախումն ամուսնուց և զավակների կախումն ծնողներից: Սրանով էլ պատասխան է տրվում խիստ բարոյական քաղքենիներին, այն վայնասունին, վորն ուղղված է կոմունիստական բաղմունության դեմ: Բաղմունությունը մի յերևույթ է, վորն ամբողջովին պատկանում է բուրժուական հասարակությանը և այսօր արտահայտվում է պոռնկություն: Սակայն պոռնկությունը հիմնականում

22-րդ շԱՐՑ:—Ի՞նչպես կվերաբերվի կոմունիստական կազմակերպությունը դեպի գոյություն ունեցող ազգությունները:

(ՊԱՏԱՍԽԱՆԸ չի գտնվել ենդելսի ձառագրում)¹:

23-րդ շԱՐՑ:—Ի՞նչպես կվերաբերվի կոմունիստական կազմակերպությունը դեպի գոյություն ունեցող կրոնները:

1) Վորպես պատասխան՝ եզ. Բերնշտայնը ենդելսի սույն գրքույկի դերմաներին հրատարակության մեջ բերում է հիմունիստական Մանիֆեստը՝ ից հետևյալ հատվածը. «Աղջկային կղզիացումները և ժողովուրդներին շահերի հակասություններն արհեստականորեն ստեղծված և ամրապնդված բուրժուազիայի զարգացման, աշատ առևտրի, գին ափելի ու ափելի յին վերանում բուրժուազիայի արտադրության միաշերտության և համաշխարհային շուկայի, արդյունադործական արտադրության շնորհիվ: Պրոլետարիատի տիրապետության ամենաառաջին պայմանը առնվազն քաղաքակրթ յերկրներին միասնական գործառնությունն է: Այն չափով, ինչ չափով վերանալու յն մի անհատի շահագործումը մյուսի միջոցով, նույն չափով էլ պիտի վերանա մի ազգի շահագործումը մյուսի կողմից: Միևնույն ազգի մեջ գոյություն ունեցող դասակարգային հակասությունների վերացման հետ միասին պիտի վերանան նաև ազգերի թշնամական հարաբերությունները»:

նվաճե մասնավոր սեփականության վրա և կվերանա վերջինիս հետ միասին: Հետևաբար կոմունիստական հասարակական գործ վոչ թե խրախուսելու յն պոռնկությունը, այլ, ընդհակառակը, վերացնելու յն այն:

(ՆՈՒՅՆՊԵՍ)²:

24-րդ շԱՐՑ:—Ի՞նչով են առաքելվում կոմունիստները սոցիալիստներից:

ՊԱՏԱՍԽԱՆ:—Այսպես կոչված սոցիալիստները բաժանվում են յերեք տեսակի:

Առաջին տեսակին պատկանում են ավատական և նահապետական հասարակության կողմնակիցները, մի հասարակության, վորը վոչնչացել է և ամեն ոք վոչնչանում է շնորհիվ խոշոր արդյունադործության, համաշխարհային առևտրի և դրանց ստեղծած բուրժուական հասարակության: Արդի հասարակության թշվառությունից այդ ուղղությունը հանում է այն յեզրակացությունը, թե պետք է կրկին վերականգնել ավատական և նահապետական հասարակությունը, վորովհետև վերջինս ազատ էր այդ թշվառությունից: Նրանց բոլոր առաջարկություններն ուղղակի կամ անուղղակի կերպով տանում են դեպի այդ նպատակը: Հետևաբար սոցիալիստների այդ ուղղությունը, չնայած իր ցուցադրած կարեկցությանը պրոլետարիատի թշվառության նկատմամբ և այդ առթիվ թափած ջերմ արցունքներին, այնուամենայնիվ միշտ պիտի յենթարկվի կոմունիստների բուռն հարձակումներին, վորովհետև այդ սոցիալիստները՝

1. Ձգտում են մի բանի, վորը միանգամայն անկարելի յն.

2. Ուզում են վերականգնել արխատուրատայի, համբարային վարպետների և մանուֆակտուրիստների ու նրանց հետ

2) «Պիտք է արդյոք ատանձին խելամուծյուն՝ հասկանալու համար, թե մարդկանց կյանքի պայմանների, նրանց հասարակական գոյության հետ միասին փոփոխվում են նաև նրանց մտապատկերացումները, հայեցողությունները և հասկացողությունները, մի խոսքով՝ նրանց գիտակցությունը... Յերե հին աշխարհի կործանման բնթացքի մեջ էր, հին կրոնները անդի ավին քրիստոնեական կրոնին: Յերե XVIII-րդ դարում քրիստոնեական գաղափարներն ընկան լուսավորության դարու գաղափարների հարվածներից, ավատական հասարակությունն այն միջոցին կյանքի և մահվան պայքար էր մղում տակավին հեղափոխական բուրժուազիայի դեմ: Թղձի ու կրոնի ազատության գաղափարներն արտահայտում էին լոկ ազատ մրցության տիրապետությունը իմացության յնազափառում... կոմունիստական հեղափոխությունն ուժեղապահման միջոցն է՝ ջախջախելու գոյություն ունեցող սեփականային հարաբերությունները: Ջարմանալի չե, վոր նա իր զարգացման բնթացքում արմատականորեն ջախջախելու յն ավանդական գաղափարները: Հիմ. Մանիֆեստ»:

կապված ինքնակալական կամ ավատական թագավորների, պաշտոնյաների, զինվորների և տերտերների տիրապետությունը, այսինքն վերակոնստիտուցիոն հասարակություն, վորը թեև գերծկլինէր արդի հասարակութան չարիքներից, բայց, համեմայն դեպս, կունենար նույնքան այլ չարիքներ և միևնույն ժամանակ չէր տալ ճշված բանվորների ազատագրութան վոչ մի հեռանկար կոմունիստական կազմակերպութան միջոցով:

3. Իրենց իսկական դիտավորութունները ամեն անգամ յերեան են բերում, յերը պրոլետարիատը հեղափոխական կամ կոմունիստական ե դառնում, անհապաղ միանալով բուրժուազիային ընդդեմ պրոլետարիատի:

Յերկրորդ տեսակին պատկանում են արդի հասարակութան կողմնակիցները, վորոնք յերկյուղ են կրում գոյութուն ունեցող հասարակութանը վտանգ սպառնացող և այդ նույն հասարակութունից անհրաժեշտորեն բղխող չարիքներից: Ներանք, հետևաբար, ձգտում են պահպանել արդի հասարակութունը, բայց և միաժամանակ վերացնել նրա հետ կապված կործանարար չարիքները: Այդ նպատակով նրանցից վոմանք առաջարկում են գուտ բարեգործական միջոցներ, մյուսները՝ բեֆորմների վիթխարի նախագծեր, վորոնք՝ հասարակութունը վերակազմելու պատրվակով ցանկանում են պահպանել արդի հասարակութան հիմքերը և ուրեմն արդի հասարակութունը: Այդ բուրժուական սոցիալիստների դեմ նույնպես միշտ պետք ե կովեն կոմունիստները, վորովհետև նրանք գործում են կոմունիստների թշնամիների ոգտին և ջատագովում այն հասարակութունը, հենց վորին կոմունիստները կամենում են տալալել:

Վերջապես յերրորդ տեսակին պատկանում են գեմոկրատական սոցիալիստները, վորոնք, ինչպես և կոմունիստները, ընդունում են 18-րդ հարցում առաջ բերված միջոցների մի մասը, սակայն վոչ վորպես դեպի կոմունիզմը տանող անցման միջոց, այլ վորպես միջոց, վորը բավարար ե վերացնելու արդի հասարակութան թշվառութուններն ու չարիքները: Այդ գեմոկրատական սոցիալիստները կամ պրոլետարներ են,

վորոնք իրենց համար լիովին չեն պարզել սեփական դասակարգի ազատագրութան պայմանները, կամ ներկայացուցիչներ մանր բուրժուազիայի, այսինքն այն դասակարգի, վորը՝ մինչև գեմոկրատիային և դրանից բղխող միջոցներին հասնելը՝ շատ տեսակետներից ունի նույն շահերը, ինչ վոր պրոլետարները: Այդ պատճառով կոմունիստները, գործողութան ժամանակ, համաձայնութան պիտի գան այդ գեմոկրատական սոցիալիստների հետ և ընդհանրապես նրանց հետ պահ մի հընար յեղածին չափ ընդհանուր քաղաքականութուն վարեն, յեթե միայն այդ սոցիալիստները չեն գնա իշխող բուրժուազիային ծառայելու և չեն հարձակվի կոմունիստների վրա: Իհարկե այդ գործակցութունը չի բացասում նրանց և կոմունիստների միջև տեղի ունեցող տարաձայնութուններին վերաբերող բանակիւղը:

25-րդ շարք. -- Խճպես են վերաբերվում կոմունիստներ ժամանակակից այսու եաղափական կուսակցութուններին:

ՊԱՏՍՍԻԱՆ. -- Այդ վերաբերմունքը տարբեր ե տարբեր յերկրներում: Անգլիայում, Ֆրանսիայում և Բելգիայում, ուր տիրապետում ե բուրժուազիան, կոմունիստները դեռ ունին ընդհանուր շահեր դանադան գեմոկրատական կուսակցութունների հետ, այն ել այնքան ավելի, վորքան ավելի յեն գեմոկրատները մոտենում կոմունիստների նպատակին իրենց ամենուրեք առաջադրած պահանջներով, այսինքն վորքան ավելի պարզ ու վորոշակի յեն պաշտպանում պրոլետարիատի շահերը և վորքան ավելի յեն հենվում պրոլետարիատին: Անգլիայում, որինակ, բանվորներից բաղկացած չարտիստները անհամամատ ավելի մոտ են կանգնած կոմունիստներին, քան մանր բուրժուական գեմոկրատները կամ այսպես կոչված արմատականները:

Ամերիկայում, ուր գոյութուն ունի գեմոկրատական սահմանադրութուն, կոմունիստները հարկադրված կլինեն պաշտպանել այն կուսակցութանը, վորը ձգտում ե այդ սահմանադրութունն ուղղել բուրժուազիայի դեմ և ոգտագործել այն՝ հանուն պրոլետարիատի շահերի, այսինքն աղգային հողային բարենորոգութան կուսակցութանը:

Նվեցարիայում, ուր արմատականները, թեև տակավին կազմում են մի չափազանց խայտաբղետ կուսակցություն, բայց և այնպես միակն են, վորոնց հետ կարող են ընթանալ կոմունիստները, մասնավորապես Վադուի (Վո) և ժնեպի արմատականների հետ, վորոնք ամենատառաջադիմականներն են:

Վերջապես Գերմանիայում դեռ նոր պիտի տեղի ունենա վճռական ճակատամարտը բուրժուազիայի ու բացարձակ միապետության միջև: Բայց վորովհետև կոմունիստները, նախքան բուրժուազիայի տիրապետության հասնելը, չեն կարող հաշվի առնել իրենց վճռական կռիվը վերջինիս հետ, ապա կոմունիստների շահը պահանջում է ոգնել բուրժուազիային՝ կարելու չափ շուտ հասնելու տիրապետության, վորպեսզի նրան կրկին կարելու չափ շուտ տապալեն: Այդպիսով կոմունիստները միշտ պետք է պաշտպանեն լիբերալ բուրժուազիային ընդդեմ կառավարությունների, սակայն պիտի զգուշանան այն ինքնախաբեությունից, վորի մեջ գտնվում է բուրժուազիան, և չպիտի հավատան նրա գալթակցեցուցիչ հայտարարումներին այն փրկարար հետևանքների մասին, վոր իբր թե ունենալու չէ բուրժուազիայի հաղթանակը պրոլետարիատի համար: Այն առավելությունները, վոր կստանան կոմունիստները բուրժուազիայի հաղթանակից, հետևյալներն են.

1. Զանազան գիշումներ, վորոնք կդյուրացնեն կոմունիստների գործը՝ իրենց սկզբունքները պաշտպանելու, քննելու, տարածելու խնդրում և ընդ սմին պրոլետարիատին համախմբելու վորպես մի միաձույլ, ռազմունակ և կազմակերպված դասակարգ:

2. Այն հավաստիացումը, թե միապետական կառավարությունների անկումից հետո՝ հերթը հասնելու չէ բուրժուաների և պրոլետարների կռիվին:

Սկսած այդ ուղից կոմունիստների կուսակցական քաղաքականությունը կլինի նույնը, ինչ վոր այն յերկրներում, ուր արդեն տիրում է բուրժուազիան:



ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

№ 81

8012

Ca 4

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՅԵՎ ՖՐԻԴՐԻԻ ԵՆԳԵԼՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Տպագրված են՝

1. ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ.
2. ԿՈՄՄՈՒՆԻՉՄԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.

Հանձնված է տպագրության՝

ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼ.

Ф. ЭНГЕЛЬС

Принципы коммунизма

Госиздат ССР Армении

ЭРИВАНЬ — 1930

